

Lucy

640

2009

209

7  
640  
պ.

2  
1  
1

209  
Д. ЗАРЕВСКИЙ ИНСТИТУТЪ  
УЧЕБНИЧЕСКАЯ БИБЛИОТЕКА  
ВОСТОЧНЫХЪ ЯЗЫКОВЪ

181

Ե Ր Ր Ո Ր Դ

209

ԱՌԱՎ Ա. ԼԱԿՈՂԻ

(պարգևատրում Ս. Պետերբուրգի ֆրեորելան  
ընկերութիւնից)

V

Թարգմանութիւն

ԳԻՒՏ ԳՆԵՆՏՅԱՆ ԵՂԱՆԵՆՆՅԱՆ

(երկրորդ տպագրութիւն)

884

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Մ. Շարաձէ, Նիկ. փ. տ. 21

Типогр. М. Шарадзе, Никол. 21

1893

25 SEP 2006

# ԵՐՐՈՐԴ ՈՍԿԻ

Ա Ռ Ա Կ

Ա.

Մի հարուստ գիւղում կենում էր մի դեր-  
ձակ, նա շատ անհանգիստ ու չար մարդ էր.  
Կուռում էր բոլոր հարեւանների հետ, գինի  
շատ էր խմում ու վերցրած գործերը շատ  
վատ էր շինում. օրինակի համար, եթէ նորան  
տալիս էին լաւ մահուդ, նորանից որեւիցէ  
հանդերձ կարելու, նա վերցնում էր թանկ  
գնով, իսկ գործը շատ վատ էր շինում, պա-  
հում էր երկար ժամանակ իւր մօտ և ան-  
պատճառ գողանում էր մահուդի ու միւս նիւ-  
թերի մի մասը, որով յայտնի կերպով վնա-  
սում էր տիրոջ... նա շատ էր ցանկանում շու-  
տով հարստութիւն ձեռք բերել: Նորա կինը,  
որի հետ միշտ կուռում էր, ցաւից մեռաւ, իսկ  
որդի ամենեւին չուներ:

Հասկանալի է ուրեմն, թէ ինչո՞ւ գիւղի  
բնակիչները չէին սիրում նորան և շատ ուշ  
ուշ էին գործ տալիս. իսկ երբ մերձակայ քա-

Дозв. цензурою, Тифлисъ, 16-го Февраля 1893 г.



49 639

640-2009

դաքից մի ուրիշ գերձակ եկաւ այդ գիւղը, այնուհետեւ էլ ամենեին գործ չտուին նորան...: Գորանից լետոյ մեր հին գերձակն իրան արբեցուծեան տուեց և վերջապէս բռնուեց մի յանցանքի մէջ... նորան դատի ենթարկեցին. բայց որովհետեւ յայտնի փաստեր չկային նորա դէմ, շուտով ազատ թողին, պատուիրելով, որ գիւղական հասարակութեան վճռի համեմատ գիւղից դուրս գրնայ...: Գերձակը հաւաքեց իւր ունեցած չունեցածը, ծախեց այն ամենը, ինչ որ չէր կարելի հետը վերցնել և ոտով ճանապարհ ընկաւ դէպի մերձակայ քաղաքը, նոր վիճակ որոնելու այնտեղ իւր համար:

Այժմ միմիայն նա զգաց, թէ ինչ վատ բան է եղել անազնիւ ապրելը, այս պատճառով սրտանց զղջաց իւր հին յանցանքներն ու վճռեց այնուհետեւ ուրիշ կերպ ապրել և եթէ նոր տեղն էլ գործեր ստանայ, ճշտութեամբ կատարել...: Մինչև քաղաքը քառասուն վերստ էր, որ փոքր ճանապարհ չէ ոտով գնացողի համար: Հինգ վեց վերստ գնալով՝ նա յոգնեց ու նստեց ճանապարհին մի փոքր քարի վերայ և նստած մտածում էր, թէ ինչ պէտք է անէր անձանօթ քաղաքում: Այդ միջոցին մօտեցաւ նորան մէկ անցաւոր խղճուկ հագ-

նուած մարդ, թեւի տակ մի կապոց բռնած. նա ողջունեց գերձակին ու հարցրեց, թէ չգիտէ արգեօք Մ. գիւղի ճանապարհը:

Գերձակը շատ լաւ գիտէր այդ գիւղի ճանապարհը և ինքը հենց այն գիւղով պիտի անցնէր. բայց ականայ պատասխանեց.

— Ես ինչ գիտեմ. այ գիւղացին գետինը հերկում է, գնա նորան հարցրու:

— Լաւ, ասաց անցաւորը, իսկ դու խընդրեմ այս կապոցս պահիր...

Նա կապոցը վայր ձգեց գերձակի մօտ և շտապով գնաց գիւղացու մօտ, որ ճանապարհից հեռու գետին էր հերկում...:

Անցաւորը երեսը դարձրեց թէ չէ, գերձակը վերցրեց նորա կապոցն ու սկսեց բաց անել. նա շատ հետաքրքրուեց իմանալ, թէ ինչ կար նորա մէջ...: Յետ արեց ու նայեց. մէջը սպիտակեղէններ կար, երկու երեք հատ հին գրքեր ու վերջապէս մի քսակ: Անշուշտ փող կլինի սորա մէջ, մտածեց գերձակը. և նորա ձեռքերը դողաց. նա շատ փողասէր էր: Բացեց քսակը. տեսաւ մէջը երեք ոսկի կար, նոր նոր, ու ինչպէս էլ փայլում էին: Գերձակը քրտնալուայ եղաւ... ոսկիներից մի հատ վերցրեց ու զրեց կօշիկի մէջ...: Յետոյ մնացած բոլոր բաները կարգի զրեց, դարձեալ կապեց

և դրեց այնտեղ, ուր ձգել էր անցաւորը...

Նա շատ սիրով կվերցնէր երեք ոսկին էլ, բայց վախեցաւ անցաւորից: Մէկ ոսկու համար սա անշուշտ այնքան շատ չէր խօսի, որքան երեքի համար: Ի հարկէ շատ լաւ կլինէր, եթէ ամենեւին չտեսնէր էլ կապոցը, այդ դէպքում բոլոր երեքն էլ կարելի էր վերցնել բայց քնչալէս իմանար այս...:

Անցաւորը վերադարձաւ գիւղացու մօտից և վերցրեց իւր կապոցը. նա իսկոյն բաց արեց (դերձակը նորից քրտնալուսայ եղաւ), վերցրեց քսակը, բացեց և...

—Ո՛ւր է երրորդ ոսկին... Հարցրեց դերձակին...

Սա պատասխանեց թէ ամենեւին չգիտէ:

—Սյդ քնչ երրորդ ոսկի է, որ ասում ես:

Անցաւորը քսակը ցոյց տուեց ու ասաց.

—Երբ ես այստեղ եկայ, սորա մէջ երեք ոսկի կար. մի բոլոյ է հեռացայ, զնացի գիւղացու մօտ և այժմ երկուսն է մնացել... Դո՞ւ ես արդեօք երրորդը վերցրել...:

—Է՛հ, դու էլ, ես ոչինչ չգիտեմ:

—Ի՞նչալէս թէ ոչինչ չգիտես: Ուրեմն այստեղ բացի քեզանից ուրիշ մարդ էլ է եղել:

—Ո՛չ ոք չի եղել:

—Ուրեմն դու ես վերցրել:

—Աստուած վկայ, չեմ վերցրել: Ես ուրիշի կապոցը կքրքրէի: Աստուած էլ յայտնի է, որ ես չեմ էլ մտածել, թէ դու այստեղ կարող էիր փող ունենալ...

—Սյդ ուղիղ է, որ Աստուած ամեն բան տեսնում է, ծանր կերպով ասաց անձանօթը (այսպէս անուանենք անցաւորին) և յետոյ շարունակեց.—Է՛հ, լաւ, եթէ դու չես վերցրել, էլ խօսելն աւելորդ է. թողնենք այդ բոլորը: Աւելի լաւ է ինձ ասես թէ ո՛ւր ես գընում:

Դերձակի սիրտը մի փոքր հանդարտեց. նա ուրախացաւ, որ այդպէս հեշտ ազատուեց ոսկիների տիրոջից, և սկսեց անդադար խօսել ու խօսել և պատմել անձանօթին իւր գլխի բոլոր անցածը... Անձանօթն ուշադրութեամբ լսում էր նորան և սպասելով մինչև պատմութեան վերջն, ասաց.

—Տես, քեզ ինչ եմ ասում. արի միասին զնանք քաղաք, ես էլ գործ ունիմ այնտեղ: Այնտեղ շատ ծանօթներ էլ ունիմ. քեզ կձանօթացնեմ նոցա հետ և կարճ միջոցում շատ գործ կգտնես ու այնտեղ լաւ կապրես քեզ համար...:

Դերձակը շատ շնորհակալ եղաւ, (նա ար-

դէն անծանօթին համարեց մի նշանաւոր մարդ շորերը փոխած) և երկուսն էլ անյայտ դժ- նայարհ ընկան...

Բ.

Տասը վերստի չափ գնալուց լետոյ հա- սան մի իշխանի հարուստ կալուածքին, ուր և գտնուում էր նորա տունը: Արդէն մօտեցան իշխանի տանն ու սկսան նայել իշխանի սպա- սաւորը, մի երևելի մարդ, նոցա ճանապարհը կարեց...

— Ի՞նչ ես ուզում, հարցրեց անծանօ- թը...:

— Իշխանը հրամայել է ինձ՝ այս կողմ անցնողներից տեղեկանալ, չկայ արդեօք նոցա մէջ մի հմուտ բժիշկ, որ կարողանար բժշկել մեր իշխանուհուն. տաս տարի է, ինչ որ նա հիւանդ է և մինչև այսօր հրաւիրած բժիշկ- ներից ոչ ոք չը կարողացաւ օգնել նորան...

— Յայտնեցէք իշխանին, ասաց անծանօ- թը, ես բժշկապետ եմ. եթէ Աստուած կամե- նայ՝ կ'օգնեմ...

«Հա, ուրեմն դու մի երևելի մարդ չե՞ս

եղել», մտածեց իսկոյն դերձակը, երբ լսեց այդ խօսքերը. «բժշկապետ, այսինքն մի հա- սարակ բժիշկ. այ դուք սատանաներ, հարստ- ների մօտ լաւ կոտորուում էք, իսկ աղքատնե- րին չէք էլ նայում երեսին»...: Այս պատճա- ռով նա վատ աչքով սկսաւ նայել անծանօ- թին. երկու թէ երեք բժիշկներ, որոց հետ գործ էր ունեցել իւր կեանքում, նորա վերայ վատ տպաւորութիւն էին արել և այժմ իւր անքաղաքավարութիւնից ու չարութիւնից բո- լոր բժշկներին անազնիւ համարեց...

Անծանօթին ու դերձակին ներս տարան լայն բակը: Իշխանը դուրս եկաւ պատշգամբն և նոցա տուած ողջունի փոխարէն՝ հազիւ մի փոքր գլուխը շարժեց. նա վեհանձն էր երե- ւում ու խիստ և կարծես չէր սիրում շատ խօսել:

— Ձեզանից ո՞րն է բժշկապետը:

Անծանօթն առաջ եկաւ...

— Յանձն ես առնում առողջացնել:

— Եթէ Աստուած կամենայ, կ'օգնեմ:

— Լաւ. բայց եթէ չես բժշկի, տեսնում ես այն մեքենան: Հոգեհանիդ այնտեղ կ'տես- նես:

Անծանօթն ու դերձակը լեռ նայեցին, որ կողմն որ ձեռքով ցոյց տուեց իշխանը. բակի

Ծայրին մի ահագին կախաղան կար շինած...  
 Ռերձակի մարմինը կարծես ասեղներով ծակ-  
 ծրկեցին: Անծանօթն ամենեւին չշփոթուեց.  
 նա հանգիստ էր և ոչինչ չպատասխանեց...  
 Նոցա ներս տարան ննջարանը հիւանդ իշխա-  
 նուհու մօտ (դերձակին բժշկի օգնական կար-  
 ծելով ներս թողին. նա մինչև անգամ հետա-  
 քրքրում էր տեսնել, թէ ինչպէս պէտք է  
 անծանօթը բժշկէր այդպիսի երկարատև հի-  
 ւանդութիւնը): Անծանօթն իսկոյն գործի  
 կացաւ. պահանջեց կոնք ու մաքուր ջուր. երբ  
 այս ամենը բերին, հիւանդին օտից գլուխ մեր-  
 կացրեց, նստացրեց կոնքի մէջ ու սկսեց վրէն  
 ջուր ածել ու լուանալ... Հիւանդը հառա-  
 չում էր և ամենեւին չէր կարողանում տեղից  
 շարժուիլ. յետոյ կարծես անշնչացաւ. աչքերը  
 փակեց ու այլ ևս ձայն ծպտուն չհանեց...  
 Երբ անծանօթը լողացրեց հիւանդին՝ շորերը  
 հագցրեց նորան և նորից դնելով մահճակալի  
 վերայ՝ սկսաւ փչել նորան. մի անգամ փչեց՝  
 հիւանդն աչքերը բացեց. դարձեալ փչեց՝ հի-  
 ւանդը վերկացաւ ու նստաւ մահճի մէջ. եր-  
 րորդ անգամ էլ որ փչեց՝ հիւանդն սկսաւ  
 մանգալ սենեկում միանգամայն առողջ և ու-  
 ղախ...

Իշխանը չափազանց ուրախացաւ. նա վար-

ձատրեց անծանօթին երեք պարկ ոսկով, նը-  
 մանապէս ընծայեց մի ձի ու մի սալ և միշտ  
 կրկնում էր. «շնորհակալ եմ ձեզանից, բարի  
 մարդիկ, շնորհակալ եմ»: Անծանօթը շատ հա-  
 մեստ կերպով ընդունեց նորա շնորհակալու-  
 թիւնը, իսկ դերձակը երբ լսեց իշխանի շնոր-  
 հակալութիւնը, իրան էլ «բարի մարդոց»  
 թուում դասեց և սկսեց մտածել, թէ ինքն էլ  
 անշուշտ բոլորովին անօգուտ չէր այս գործի  
 մէջ... Բայց ամենից շատ գրաւում էր նորան  
 երեք պարկ ոսկին. միթէ անծանօթը գոնէ մի  
 բուռը չէր տալ նորան:

Գ.

Նոքա հեռացան իշխանի կալուածքից ու  
 առաջ գնացին: Այժմ լաւ հանգիստ էին. ու-  
 տով ու ձիով մանգալու մէջ մեծ զանազանու-  
 թիւն կայ. և ձին էլ ի՛նչ կուշտ էր ու ա-  
 ռո՛յգ. երկու մարդուն ու այնքան ծանրոցն  
 այնպէս էր տանում, ինչպէս մի փութ բան:  
 Մէկ այնպէս էլ վազում էր, որ թուչունը ետե-  
 ւից չէր հասնի: Ռերձակի նախանձն ու չա-  
 րութիւնը գրգռուել էր. «Մարդիկ բազմ ու-  
 ճին, մտածում էր նա, իսկ ես ամենեւին: Ին-

«չ՞ն Համար այսքան ոսկի առին սորան. Հենց  
 «միայն նորա Համար, որ ջրով լուաց ու փը-  
 «չեց: Այդ Հօ ես էլ գիտէի. մի մեծ բան չէ  
 «ջրով թըջելն ու փչելը... Ես էլ կարծում էի,  
 «թէ մի նոր բան է անելու, իսկ արի տես,  
 «թէ ինչ դատարկ բաներով ոտի կանգնացրեց  
 «հիւանդին: Այդ Հօ ես էլ կարող եմ անել.  
 «լաւ, թող մի գէպք էլ պատահի, ես գի-  
 «տեմ»: x

Գարձեալ տաս վերստաչափ տեղ անցան,  
 նայեցին—տեսան մի ուրիշ իշխանական կա-  
 լուած, մէջն էլ իշխանի տունը. մտան բակը.  
 արդէն իշխանի հոյակապ տան մօտիցն էին  
 անցնում, երբ լանկարծ, չիմացան որ կողմից,  
 մի սպասաւոր մօտեցաւ և ձիու սանձը բըռ-  
 նելով՝ ասաց.

—Սպասեցէք. իշխանը պատուիրել է ինձ  
 այստեղից անցնող բոլոր մարդկանցից տեղե-  
 կանալ, չիտ՛յ արդեօք նոցա մէջ մի հմուտ  
 բժիշկ, որ կարողանայ բժշկել մեր իշխանու-  
 հուն. քսան տարի է, որ նա հիւանդ է և մին-  
 չև այսօր որքան բժիշկ էլ հրաւիրել ենք՝ ոչ  
 ոք չի կարողացել բժշկել:

Անձանօթն ուզում էր խօսել, բայց դեր-  
 ձակը անքաղաքավարութեամբ ձեռքով փակեց

նորա բերանն ու ինքը պատասխանեց ծա-  
 ուային.

—Սոս իշխանին, որ ես բժիշկ եմ. եթէ  
 կամենամ՝ կարող եմ բժշկել:

Սպասաւորը գնաց իշխանին յայտնելու,  
 իսկ դերձակը փոքր ինչ հեռանալով անձանօ-  
 թից՝ սկսաւ մտածել. «միմիայն դու չպէտք է  
 բժշկես, թող մի փոքր ուրիշն էլ շահուի...  
 Քսան տարուայ հիւանդ է և ոչ թէ տասը  
 տարուայ, առաջուայ հիւանդի պէս: Գորա Հա-  
 մար էլ շնորհակալութիւնը շատ աւելի մեծ  
 կլինի երբ առողջացնեմ. գուցէ ոսկի էլ քեզա-  
 նից շատ ստանամ»:

Նոցա ներս տարան իշխանական տան  
 լայնարձակ բակը. ուր այս անգամ ինքեանք  
 նկատեցին կախաղանը (դերձակն իսկոյն դէմ-  
 քը շուռ տուեց ու շտապեց փախչել այդ  
 զարհուրելի զործիքը տեսնելուց...) Իշխանը  
 դուրս եկաւ պատշգամբը, նա նոյնչափ ծան-  
 րատեսիլ էր ու խիստ, որքան և առաջինը:

—Ձեզանից ո՞րն է բժիշկը, Հարցրեց նա:  
 Դերձակը ծանր կերպով առաջ եկաւ...

—Յանձն ես ա՛նում առողջացնել:

—Սյո՛, յանձն եմ առնում. Հէնց դորա  
 Համար եմ բժիշկ: Եթէ կամենամ կարող եմ

անշուշտ բժշկել. այս առաջին անգամը չէ, որ այդպիսի գործ ենք կատարում:

Գերձակն իւր պատիւն աւելացնելու համար՝ սուտ էլ խօսեց. բայց իշխանը որոշ պայման դրեց նորա հետ:

— Լաւ, ասաց նա. իսկ եթէ չես առողջացնի, այն ժամանակ, տեսնում ես այն մեքենան, նա կտայ քեզ պատասխան:

Գերձակը վախեցաւ ու դեղնեց. բայց իսկոյն ուղղուեց ու իշխանի հետ զնաց հիւանդի մօտ... Անծանօթն այս անգամ հետաքրքրութիւնից շարժուած հետևեց նորան...

Անծանօթի արածի պէս, գերձակը պահանջեց կանք ու մաքուր ջուր. այս բոլորը բերին ու նա մերկացնելով հիւանդին նստացրեց կոնքի մէջ, սկսաւ ջուր ածել նորա վերայ և լուանալ. հիւանդը հառաչում էր, իսկ յետոյ անշնչացաւ...: Լողացնելը վերջացնելով՝ գերձակը շորերը հագցրեց նորան ու պառկացրեց մահճակալի վերայ. յետոյ սկսեց փչել. մի անգամ փչեց, երկրորդ անգամ էլ փչեց, երրորդ անգամ էլ, տաս, քսան անգամ էլ,—բայց ոչինչ օգնութիւն չեղաւ հիւանդին: Հիւանդը մեռածի պէս պառկած էր. ոչ աչքերն էր բաց անում և ոչ մարմնի որ և է մասը շարժում...

Մի քանի անգամ անցուդարձ արեց մեր գերձակը սենեկի մէջ չտեսնելով ոչինչ բան ու դարձեալ սկսաւ փչել հիւանդին. փչեց, փչեց, մի ամբողջ ժամ փչեց. կէս օր փչեց, շատ փքուելուց կապտեց, բայց ոչինչ հետևանք չունեցաւ. հիւանդն անշունչ պառկած էր:

Յուսահատութիւնից նա դիմեց անծանօթին.

— Խնչ անեմ: Ել թնչպէս փչեմ: Սովորցրո՛ւ, 'ի սէր Աստծու, թէ չէ կորած եմ:

— Լաւ կ'սովորցնեմ: Բայց նախ և առաջ ինձ ասա, թէ թնչ եղաւ երրորդ ոսկին...

— Մէխ, դու դեռ հին բաներից ձեռք չես վերցնում: Լաւ, ես թնչ գիտեմ ինչ եղաւ: Ես չեմ վերցրել: Օգնիր, Աստուածդ սիրես, բարութիւն արա ինձ: Շո՛ւտ, թէ չէ կ'կախեն ինձ:

— Դեհ առաջ ասա, թէ երրորդ ոսկին ո՛ւր է:

Իշխանն արդէն տեսաւ, որ այդ բժիշկը բանի շնորհք չունի, հրամայեց որ կախեն. կապեցին խեղճ բժշկին ու քարշեցին կախաղանի մօտ... Գերձակն ընդդիմանում էր, լաց էր լինում և անգաղար խնդրում էր անծանօթին, որ սովորցնի. «Խնդրեմ փչիր, թնչ կպակսի քեզ: Գոնէ մի փոքր փչիր, թէ չէ

բոլորովին կորած եմ... Իսկ անծանօթն ան-  
գաղար պնդում էր. «ասան, ո՞վ վերցրեց եր-  
րորդ ոսկին»:

Սակայն դերձակը չխոստովանեց իւր գո-  
ղութիւնը. նա արդէն կախաղանի տակ էր,  
բայց դարձեալ նոյն պատասխանն էր տալիս.  
«Չգիտեմ, ես չեմ վերցրել, Ս.ստուած վկայ է,  
որ ես չեմ վերցրել»:

Անծանօթը խղճաց կամակոր դերձակին  
ու ասաց իշխանին.

— Ազատ թողէք գորան. դա մի<sup>9</sup>թշուառ  
մարդ է, որովհետեւ այնպիսի բան է յանձն  
առնում, ինչ որ իւր գործը չէ: Ես կլաւաց-  
նեմ իշխանուհուն. նա կառողջանայ էլ ու  
կուրախանայ էլ:

Դերձակին ազատեցին, իսկ անծանօթը  
գնաց հիւանդի մօտ. մի անգամ փչեց՝ հի-  
ւանդն աչքերը բացեց. դարձեալ փչեց՝ վեր  
կացաւ ու նստեց մահճակալի վերայ. երրորդ  
անգամ էլ որ փչեց՝ հիւանդն սկսաւ մանգալ  
սենեկում, բոլորովին առողջ և ուրախ...

Իշխանն այն աստիճան ուրախացաւ, որ  
դեռ կեանքում չէր ուրախացել այնպէս. ՚ի  
պատիւ անծանօթի նա խնճոյք տուեց և ըն-  
ծայեց նորան վեց պարկ ոսկի: Եկան բազմա-  
թիւ հիւրեր և սկսան ուրախութիւն անել,

գինին առուակի պէս թափւում էր... Դեր-  
ձակը փոքր ինչ խմեց ու ասաց.

— Դա միմիայն փչել գիտէ, իսկ իմ գոր-  
ծըս աւելի շատ էր. ես մերկացրի իշխանու-  
հուն, դրի կոնքի մէջ, թրջեցի ու լողացրի  
ջրով. յետոյ նորից հագցրի ու դրի մահճա-  
կալի վերայ... Դեռ հիմի էլ ձեռներս ցաւում  
են այն մեծ աշխատանքից, իսկ նա ի՞նչ շի-  
նեց, նորա միակ շնորհքը փչելն է:

— Թող այգպէս լինի, պատասխանեց ան-  
ծանօթը, ճշմարիտը պէտք է ասել, որ քո  
չարչարանքն աւելի էր քան իմը:

Խնջոյքից փոքր ինչ յետոյ՝ նոքա բաժա-  
նուեցան իշխանից ու իննը պարկ ոսկով շա-  
րունակեցին իրանց ճանապարհը... նախանձն  
ու չարութիւնն աւելի ու աւելի էին նեղում  
դերձակին:

Դ.

Չորս վերստ ճանապարհ գնալուց յետոյ՝  
տեսան մի գետ, որ պիտի անցնէին ճանա-  
պարհը շարունակելու համար, բայց ո՞չ նա-  
ւակ կար, և ոչ ուրիշ մի բան, որով կարողա-

6000-040 (1870)  
1001/201

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ  
ԳԵՂԱՐՔԱՆԻ  
ԳՐԱԴԱՐԱՆ

նային միւս ափն անցնէ. գետն էլ սրընթաց էր ու բաւական էլ լայն...

— Այժմ ինչ պէտք է անենք, հարցրեց գերձակը:

— Այ կտեսնենք, պատասխանեց անծանօթը. այն մեծ քարը, որ այն հեռու տեղ ընկած է, հօ տեսնում ես, անշուշտ այնտեղ երբ և իցէ ջրաղաց է եղել... Գնանք այնտեղ:

Գնացին այն մեծ ու կլոր քարի մօտ. անծանօթը գլորեց քարը ջրի մէջ և սալակը, ծանրօցն ու ձիուն տեղաւորեց նորա վերայ. քարը կենդանի էակի պէս այդ բոլորը հասցրեց միւս ափն ու յետ դարձաւ առաջուայ տեղը...

— Այժմ հերթը մերն է, ասաց գերձակը:

— Ո՛չ, սպասիր. միասին չենք կարող անցնել, պատասխանեց անծանօթը. — ես շատ ծանրը եմ և գիտեմ, որ քարը հազիւ միայն ինձ կարող է տեղափոխել և եթէ որ դու էլ ինձ հետ միասին կանգնես նորա վերայ, անշուշտ տակը կանի մեզ: Աւելի լաւ է, որ մէկ մէկ տեղափոխուենք, առաջ ես ու յետոյ դու:

— Ի՛հ, չէ, ես համաձայն չեմ. առաջ թող ես անցնեմ:

— Դեհ, լա՛ւ, առաջ դո՛ւ գնա:

Գերձակը պատճառ ունէր, որ վիճում էր

առաջ տեղափոխուելու մասին. նա վախենում էր, թէ անծանօթն առաջ տեղափոխուելով միւս ափը, գուցէ ոսկիները վերցնի ու գնայ, իրան — գերձակին՝ բաղտի կամքին յանձնելով... «Յետոյ իմ բոլոր աշխատանքս ՚ի զուր կանցնի», ինքն իրան ասաց գերձակն ու շուտով թռաւ քարի վերայ...

Քարն առաջ շարժուեց, որ գերձակին դուրս տանի միւս ափը. և յաջողութեամբ հասաւ գետի մէջ տեղը, բայց յանկարծ, չգիտեմ ինչ պատճառով, սկսաւ իջնել ջրի խորքը... Գերձակը յուսահատութիւնից ձեռները շարժում էր ու աղաղակում.

— Ընկղմւում եմ, ընկղմւում, օգնեցէք, փրկեցէք:

— Կփրկեմ, ասաց անծանօթը. միմիայն ասա ինձ, ո՞վ վերցրեց երրորդ ոսկին...

— Չգիտեմ, Աստուած վկայ չգիտեմ: Օգնիր, հօգիս, ընկղմւում եմ. վայ, վայ:

Քարը բոլորովին ծածկուեց ջրի տակ և գերձակն էլ նորա հետ միասին ընկղմուեց մինչի կէսը...

— Ասո՛ւ, ո՞վ վերցրեց երրորդ ոսկին:

— Չգիտեմ, ես չեմ վերցրել, Աստուած վկայ չեմ վերցրել: Օգնիր, ՚ի սէր Ստեղծողին, բոլորովին ընկղմւում եմ: Վայ, օգնիր:

Նա աւելի ու աւելի ընկղմւում էր ջրի մէջ և միմիայն գլուխն էր երևում զզգզած մագերով ու զարհուրած դէմքով... «Ես սորան թնչ անեմ» մտածեց անծանօթն և վազեց նորա մօտ ջրի վերայից այնպէս, ինչպէս ցամաքի վերայ կարելի է վազել. բռնեց նորան ու ջրից հանելով դուրս տարաւ միւս ափը բոլորովին առողջ ու անվնաս... Զուրը վտակի պէս հոսում էր գերձակի վերայից. բայց նա սագի պէս ցնցուեց ու վերջացաւ ամեն բան:

Երբ նոքա առաջուան պէս նստան սայլի մէջ և փոքր ինչ առաջ գնային, անծանօթըն ասաց.

— Գիտե՞ս ինչ կայ, բարեկամ. ես կարծում եմ, որ այժմ կարիք չունիմ քեզ հետ միասին քաղաք դնալու ու քեզ ծանօթացնելու բարեկամներիս ու ծանօթներիս՝ գործ տալու համար. դու իսկոյն կստանաս քո մասը ոսկին և այնչափ հարուստ կ'լինես, որ կարծեմ գերձակութիւնիցդ էլ ձեռք կ'վերցնես... Արի բաժանենք ու մենք էլ հեռանանք միմեանցից:

— Արի, հա թնչ է, ես պատրաստ եմ:

Գերձակը չափազանց ուրախացաւ, որովհետև մինչև այդ ընդմէջ չէր հաւատում, թէ

անծանօթն իրան էլ մասը պիտի տար հաւաքած ոսկուց... Նորա աչքերը վառուեցան, ձեռքերի դողն էլ բռնեց. նա մինչև անգամ պատրաստ էր նորից խոնարհել անծանօթի առաջ և այս անգամ գետնի հետ հաւասար... Երբ սայլը կանգնեցրին ու վայր իջան գետին. անծանօթը ոսկով լի պարկերը շուռ տուեց գետնին և նոցա միջի բոլոր ոսկին հաւաքեց ու զիզեց միասին. մի ոսկեայ բլրակ դառաւ, որ այնպէս էր փայլում շուրջը մի քանի վերստ հեռաւորութեամբ, ինչպէս երկնքից ցած ընկած արեգակ: Գերձակը չէր կարողանում աչքերը հեռացնել նորանից, կարծես վրէժն մեխած ունենար. և անգաղար դուրս էր ու շրթունքները լիզում... Անծանօթըն սկսեց երեք փոքր կոյտերի բաժանել ոսկին...

— Ինչո՞ւ տղայէս, զարմացած հարցրեց գերձակը. չէ որ մենք երկու հողի ենք. այդ երրորդ կոյտը ում համար ես պատրաստում... Երբ սայլը, իսկոյն կիմանաս...

Անծանօթը բաժանում էր ոսկին. իսկ գերձակը գլուխն էր ջարդում. ախր ո՞ւմ պիտի հասնի այս երրորդ կոյտը. թնքը պիտի վերցնի. Սակայն նա ձեռներն անգործ չէր թողնում. հէնց որ անծանօթը կմօտենար որ

և է կոյտին, նա իսկոյն կամաց մի բուռն  
ոսկի կվերցնէր ուրիշ կոյտից ու կածէր գրպա-  
նը կամ ծոցը... Այդպիսով նա բոլոր բաժին-  
ներից քիչ ոսկի չգողացաւ...

Անծանօթը բաժանեց վերջացու ու ա-  
սաց.

— Դեհ, այժմ նայիր. այն այս կոյտն ինձ,  
այս միւսը քեզ, իսկ այս երրորդը նորան, ով  
որ իմ երրորդ ոսկին վերցրեց...

Դերձակն ամենևին չէր սպասում այսպի-  
սի խօսքի, բայց ճար չկար. վերջապէս պէտք  
է խոստովանէր, այլապէս չէր կարող երրորդ  
կոյտ ոսկին ստանալ: Նա ծոծրակը քորելով  
ակամայ ասաց (բաւական ծանր էր այդ ըոպէն  
նորա համար).

— Ե՛ս վերցրի երրորդ ոսկին...

Անծանօթը զարմացած նայեց նորան.

— Դո՛ւ, այդ կարելի բան չէ.

— Աստուած վկայ ես վերցրի:

— Այդ երբ էր... չեմ հաւատում...

— Հէնց այն ըոպէին, երբ դու գնացիր  
զիւզացուն ճանապարհը հարցնելու:

— Յոյց տուր տեսնեմ այն ոսկին, ես իս-  
կոյն կճանաչեմ:

Դերձակը շտապով ձեռքը տարաւ գէպի  
կօշիկը. բայց այդ ըոպէին լանկարձ գրպանի

բերանը բացուեց ու կոյտերից գողացած ոս-  
կիները թափուեցան զանազան կողմերը...

— Վահ, վահ, այդ ինչ շատ ոսկի ես  
ունեցել, աղաղակեց անծանօթը. սրտեղից ես  
այդքան ոսկի ձեռք բերել:

Դերձակի լեզուն շփոթութիւնից՝ կա-  
պուեցաւ, իսկ անծանօթը պատասխանեց.

— Ոսկին ում որ սիրում է, նորա մօտ է  
գնում: Ա՛յ ես քեզ հետ միասին նստած էի  
ոսկու մօտ, իսկ, տես, ինձ մօտ մի հատիկ ոս-  
կի եկաւ: Ես ամենևին չեմ ուզում նորան.  
Ա՛ռ, քեզ լինին բոլոր բաժինները:

Ասաց ու անյայտացաւ անծանօթը. դեր-  
ձակը չնկատեց անգամ, թէ ինչ եղաւ նա...  
Բայց սակայն դերձակի հոգսն էլ չէր, թէ ինչ  
եղաւ անծանօթը. նա վրայ ընկաւ ոսկու կոյ-  
տերին, նայեց—այլ ևս ոսկի չկար նորա ա-  
ռաջ, այլ երեք կոյտ ամեն տեսակ աղբ ու ա-  
պականութիւն... Նա յուսահատութիւնից ա-  
ղաղակեց, վայր ընկաւ գետնին, սկսաւ փոք-  
րիկ մանկան պէս հեկեկալ ու... զարթնեց:

Ե.

Ուրեմն այդ երազ էր...

Այն, երազ էր. բայց այնպիսի պարզ, որոշ երազ, որ դերձական երկար ժամանակ անզգայացած նայում էր շուրջ, որոնելով իւր ոսկէ կոյտերը, որոնք աղբ էին դարձել և անյայտ անձանօթին... Ոսկին կարծես զեռ էլի փայլում էր նորա աչքերի մէջ, անձանօթի խօսքերը զեռ էլի հնչում էին նորա ականջին... Բայց ոչ մինը կար և ոչ միւսը. չորս կողմը դաշտ էր, դատարկ դաշտ, թողոտ ճանապարհ ու նորա վերայ էլ այն քարը, որի վերայ դերձակը նստեց հանգստանալու և որի վերայից աննկատելի կերպով ընկել էր խիտ խոտերի մէջ, դալկացած լինելով անսովոր երկայն ճանապարհորդութիւնից ու նիրհելով ընկել խոր ու երկարատև երազի մէջ...



« Ազգային գրադարան »



NL0153072

